«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում.

Դաստիարակ՝ Վարսենիկ Կարապետյան

Մանկապարտեզ՝ « Պտղավանի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 2

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 1 .....

1.1 ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄ 4

1.2 ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ 8

1.3 ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ.....12

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 2.....

2.1 ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԸՆԹԱՑՔԸ 13

2.2 ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆ 15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....19

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ինտեգրված պարապմունքները իրենց բազմազանությամբ և միօրինակությամբ ապահովում են երեխայի ամբողջական պատկերացումներն ու բազմազան կապերը՝ տարբեր օբյեկտների և երևույթների միջև»:

Լալա Սմբատյան «Նախաշավիղ»

Նախադպրոցական կրթության կարևոր նպատակներից է երեխաների մեջ սերմանել և մշակել այնպիսի որակներ ու հատկություններ, ինչպիսիք են՝ քննադատական մտածողությունը, հետաքրքրասիրությունը, անմիջականությունը, զարմանքը, երևակայությունը, աշխատանքից գեղագիտական հաճույք ստանալը: Բոլոր երեխաներն ունեն այս հատկությունները փոքր հասակում, բայց հաճախ կորցնում են դրանք կյանքի առաջին տասնամյակում: Մինչդեռ այս հատկությունները կարևոր դեր են խաղում սովորելու գործընթացում: Մյուս կողմից՝ աշխարհը միասնական է և երեխան այն ընկալում է որպես ամբողջական միասնություն: Ուստի շրջապատող աշխարհին երեխային ծանոթացումը, հատկապես վաղ տարիքում, չի կարելի մասնատել այսպես կոչված «առարկաների» (մայրենի, մաթեմատիկա, բնագիտություն, երաժշտություն և այլն), դա կարող է աշխարհի մասին մասնատված պատկեր ստեղծել: Այս խնդրի լավագույն լուծումը ինտեգրված ուսուցումն է, երբ իրեն շրջապատող աշխարհի որևէ կոնկրետ երևույթ երեխան ուսումնասիրում է միաժամանակ մի քանի տեսանկյունից (ուսումնասիրում է, հասկանում, հաշվում այն, փորձում ու փորձարկում, նկարում, ծեփում, խոսում և երգում դրա մասին, խաղարկում դրա հետ կապված իրավիճակներ և այլն): Նշված նպատակին հասնելու արդյունավետ ուղիներից մեկը ուսումնառությունը ինտեգրված թեմատիկ դասերի միջոցով կազմակերպելն է: Ինտեգրված պարապմունքը ուղղված է որոշակի թեմայի ամբողջական բացահայտմանը գործունեության տարբեր ձևերի կիրառմամբ՝ խաղ, աշխատանքային գործունեություն, կերպարվեստային գործունեություն, պարապմունքներ:[1]

[1] Հ.Միտոյան, Լ.Սմբատյան ՈՒսումնամեթոդական ձեռնարկ մանկապարտեզի համար, Երևան 2011,

Հետազոտական նպատակներից է երեխաների մեջ սերմանել այնպիսի որակներ և հատկություններ, ինչպիսիք են՝ քննադատական մտածողություն, հետաքրքրասիրություն, անմիջականություն: Ներկայացնել ինտեգրված պարապմունքների դրական ազդեցությունը կարողունակությունների զարգացման գործում և միջառարկայական կապերով պլանավորած պարապմունքների ընթացքում:

Գլուխ 1

1.1 **Ինտեգրված ուսուցում**

«Երեխան ունի տեսնելու, մտածելու, զգալու իր հատուկ ունակությունը: Չկա առավել անմիտ բան, քան նրանց այդ ունակությունը մերով փոխարինելու փորձը»:

Ժան Ժակ Ռուսո «Նախաշավիղ 2» 2016

Թեմատիկ դասերը որևէ կոնկրետ թեմա, երևույթ ուսումնասիրելու ընթացքում կարևորում են գործունեության այն ձևերը, որոնք պահանջում են ինքնուրույն մտածողություն, նախաձեռնություն, համագործակցություն, հնարամտություն, անձնական կարգապահություն, շրջապատում կատարվող փոփոխությունների ճիշտ ընկալում: Թեմատիկ ուսուցումն ապահովում է երեխայի զարգացման մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի զարգացումը և չի սահմանափակվում մեկ առանձին ոլորտով: Շատ կարևոր է նաև հոգատար, աջակցող միջավայր ստեղծելը, քանի որ միայն այսպիսի միջավայրում են մեծանում բազմակողմանի զարգացած, ուսման մեջ հաջողություններ դրսևորող երեխաները: Թեմատիկ պարապմունքների ժամանակ դաստիարակը գիտակցաբար այնպես է անում, որ երեխաները զգան մեծահասակների հոգատարությունը, շահագրգռվածությունը երեխաների ուսման հարցում: Երեխաների սովորելու ընթացքում դաստիարակները և ծնողները զրուցում են նրանց հետ՝ ողջ ուշադրությունն ու էներգիան կենտրոնացնելով ուսման բովանդակության վրա: Աստիճանաբար ավելի ծավալուն և անկեղծ դարձող երկխոսությունների միջոցով նրանք զարգացնում են երեխաների մտածողությունը: Այսպիսի մթնոլորտը զարգացնում է երեխաների մտավոր և լեզվական ունակությունները և ինքնավստահություն է ներշնչում նոր ձեռք բերած գիտելիքները կիրառելու համար: Թեմատիկ ուսուցումից բոլորն էլ շահում են: Ծնողները ներգրավվում են կատարվող տարբեր աշխատանքների մեջ և տեղյակ են, թե ինչ են անում իրենց երեխաները: Մանկավարժներին ոգևորում են պարապմունքների նոր բովանդակությունը և նոր մեթոդներ կիրառելու համար ստեղծված գրավիչ հնարավորությունները: Երեխաներն, իրենց հերթին, դառնում են գիտակ, ինքնատիպ մտածողներ, որոնց թույլ է տրվում նոր ձևերով դրսևորել իրենց գիտելիքները: Երբ այսպիսի համալիր

ուսուցումը մանրակրկիտ պլանավորվում և իրականացվում է, ապա արդյունքում երեխաները դրսևորվում են հետևյալ հատկանիշները.

- հոգատար են միմյանց նկատմամբ,
- հետաքրքիր կապեր են ստեղծում,
- կատարելագործում են շփման և երկխոսության հմտությունները,
- ձևավորվում են որպես համայնքի անդամներ:

Թեմատիկ ուսուցումը ենթադրում է ուսումնական ծրագրի տարբեր բաժինների միջև կապերի ստեղծում, ինտեգրում՝ մեկ հետաքրքիր նյութ ուսումնասիրելու միջոցով, որի մեջ ամփոփված են բովանդակային միավորներ ծրագրի տարբեր բաժիններից: Ինտեգրված թեմատիկ ուսուցման ծրագիրը կազմվում է այնպես, որ երեխաները տեսնում և հասկանում են առարկայական ոլորտների միջև եղած կապերը և նրանց կապը կյանքի հետ: Թեմատիկ ուսուցումը հնարավորություն է տալիս մանկավարժին ծրագիրը կազմակերպել երեխաներին հետաքրքրող թեմաների, խնդիրների կամ կենսական հարցերի շուրջ: Թեմատիկ ուսուցումը միջառարկայական է, ինչպիսին ինքը՝ կյանքն է: Այս փաստը երեխաների համար անմիջապես նշանակալի է դառնում, երբ լուծելու համար նրանց է ներկայացվում մի «իսկական» խնդիր կամ ուսումնասիրության ենթակա մի նոր գաղափար: Ուսումնասիրվող թեմայի կամ ծրագրի մեջ երեխայի հետաքրքրություններին կենտրոնական տեղ հատկացնելով՝ ապահովվում է երեխաների շահագրգռվածությունն ու հետաքրքրասիրությունը թեմայի նկատմամբ: Թեմատիկ դասերի ծրագրման ժամանակ մանկավարժը պետք է հաշվի առնի հետևյալը.

- Արդյո՞ք թեման համապատասխանում է երեխաների հետաքրքրություններին:
- Ընտրված թեման նպաստո՞ւմ է երևակայության ու ստեղծագործական մտածողության խթանմանը:
- Հնարավո՞ր է ընտրած թեման անցնել այնպես, որ ապահովվի բազմամակարդակ մասնակցությունը, և միաժամանակ յուրաքանչյուր երեխայի գործադրած ջանքը

ունենա հաջողություն:• Երեխաները հնարավորություն կունենա՞ն համագործակցելու և որոշակի պատասխանատվություն կրելու: • Երեխաները հնարավորություն կունենա՞ն ավելացնելու իրենց գիտելիքները և փորձը առարկաների, մարդկանց և իրենց շրջապատում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ: [2]

Ինտեգրումը կրթական գործընթացում

Հանգուցային բառեր. ինտեգրում, ինտեգրված դաս, կրթական տեխնոլոգիաներ, դրդապատճառ, առաջատար, հակասություն, միջառարկայական կապ: Այսօրվա դպրոցում ուսուցումը կազմակերպվում է առանձին առարկաներից ծրագրային գիտելիքների հաղորդման եղանակով, ինչը առանձին առարկաներից տրվող գիտելիքների ամբողջություն չէ, հետևաբար աշխարհի մասին տալիս է մասնատված, ոչ ամբողջական պատկերացում: Համաշխարհային մանկավարժական միտքը վկայում է, որ ուսուցման այս ձևը արդյունավետ չէ, և իբրև խնդրի լուծման ելք՝ առաջադրում է ինտեգրված ուսուցումը, որը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթի ընկալմանը, գիտակցմանն ու յուրացմանը: Ինտեգրված ուսուցման ծրագրերը կազմվում են այնպես, որ մի առարկայից գիտելիքները հիմնվում են մեկ այլ կամ մի քանի այլ առարկաներից վերցրած գիտելիքների վրա: Սակայն ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն: Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերակվում են միավորված (ինտեգրված) ծրագրերի հետևյալ տեսակներ

. ● միջառարկայական,

● բազմառարկայական,

● անդրառարկայական:

[2] Հ.Միտոյան, Լ.Սմբատյան ՈՒսումնամեթոդական ձեռնարկ մանկապարտեզի համար, Երևան 2011,

Որպես միավորող առանցք՝ հաճախ հանդես է գալիս որևէ թեմա, որն ընգրկում է մի քանի առարկա: 70-80-ական թվականներին ի հայտ եկան միջառարկայական կապերի և ուսուցման գործընթացում դրանց գործնական կիրառության յուրահատուկ դրսևորումներ՝ դասերի նոր տիպեր, մասնավորապես՝ ինտեգրված դասեր, որոնք այլ կերպ կոչվեցին բինար, սինթետիկ, համատեղ դասեր: Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որն իր մեջ ներառում, միավորում է մեկ հասկացության ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: [3]Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և օգնող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ ու մեթոդներ: Օրինակ՝ կարելի է ինտեգրել առարկաների բովանդակությունը՝ պահպանելով առաջատար առարկայի ուսուցման մեթոդները, ինչպես նաև կարելի է ինտեգրել տարբեր առարկաների ուսուցման մեթոդիկաները՝ պահպանելով մեկ առարկայի բովանդակությունը: Սակայն, ինտեգրված դասեր ուսուցիչներն այդքան էլ հաճախ չեն կիրառում:

1.2 Ինտեգրված դասերի կազմակերպումը

«Զուգորդական (ասոցիատիվ) մտածողություն» գաղափարի էությունն այն է, որ յուրաքանչյուր գիտելիք կարելի է ձեռք բերել զուգորդությամբ, քանի որ գիտելիքների համակարգը զուգորդությունների համակարգ է:

Յու.Ա.Սամարին

1. [3] . «Ինտեգրումը կրթական գործընթացում» - Փնջոյան Տ.-2018թ.էջ402-404

Նոր պահանջներ են առաջադրվել կրթության կազմակերպման եղանակներին, ձևերին ու բովանդակությանը: Այս իմաստով փոխվել են կրթության նպատակը, խնդիրները, ուսուցչին ներկայացվող պահանջները:

Ուսուցումը հենվելով առարկայական ուսուցման՝ դարերով մշակված և կատարելագործված ուսումնական ծրագրերի կազմման սկզբունքների վրա, անհրաժեշտ է համարել ինտեգրել, ամրապնդել, ընդլայնել տարբեր առարկաների փոխադարձ կապը, որի ամբողջական ճանաչողությունը ենթադրում է համապատասխան գիտելիքների միավորում: Գիտելիքների միավորումը հիմնական ուղի է իմացության մեջ, քանի որ դրանով ապահովվում է իրականության երևույթների նկատմամբ համակարգային մոտեցման դրսևորումը:

Ուսումնական առարկաների ինտեգրումը թույլ կտա նվազեցնել ուսուցման բովանդակության և հմտությունների կրկնությունը, ավելի շատ սովորեցնել, նոր պատկերացում ձևավորել հիմնական հմտությունների նշանակության մասին, իրականության տարբեր երևույթների տեղայնացված, մեկուսի դիտարկումից անցնել փոխկապակցված, համակարգված ուսումնասիրության: Ելնելով առկա պատկերացումներից, նշենք, որ ինտեգրումը որոշակի ուսումնական բնագավառների նպատակաուղղված միավորում է:

«Ինտեգրում» եզրույթը մեր պատկերացմամբ, մի քանի իմաստներ կարող է ունենալ: Առաջին՝ «ինտեգրումը» երեխայի մեջ շրջապատող աշխարհի մասին ամբողջական պատկերացման ստեղծումն է: Ինտեգրման արդյունքում երեխան ձեռք է բերում այն գիտելիքները, որոնք արտացոլում են շրջապատող աշխարհի (որպես համակարգ) առանձին մասերի միջև գոյություն ունեցող կապը: Հենց առաջին քայլերից երեխան աշխարհը պատկերացնում է իբրև մի ամբողջություն, որտեղ բոլոր տարրերը փոխադարձաբար կապված են:

Երկրորդ՝ «ինտեգրումը» առարկայական գիտելիքները մի ընդհանուր առանցքի վրա դնելն է: Այս դեպքում ինտեգրումն ուսուցման միջոց է:

Երրորդ՝ ինտեգրումը դիտարկվում է որպես պայման՝ աշակերտների ընդհանուր զարգացման մեջ: Սովորողների համար ուսումնասիրվող օբյեկտի դիտարկումը, զննումը մեկուսացված չի մնում: Նա, շնորհիվ տվյալ առարկայի բազմակողմանի ընկալման, համադրում, խմբավորում, կոնկրետացնում, դասակարգում, համեմատում է: Մտածողական գործընթացների և առարկաների հետ կատարվող գործողությունների տարբեր եղանակների միջև կապերի հաստատումն ապահովում է սովորողների գործունեության ամբողջականությունը և համակարգվածությունը:

Ինտեգրման խնդիրն արդիական է ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումներով:

- Ինտեգրված դասերը նպաստում են աշխարհի ամբողջական պատկերի ձևավորմանը, բնության, հասարակության մեջ տեղի ունեցող երևույթների միջև կապերի բացահայտմանն ու ընկալմանը:
- Ինտեգրումը հենց գիտական կապերի մերձեցման գործընթաց է, որն ուղեկցվում է տարբերակված ուսուցմամբ: Ինտեգրման գործընթացը միջառարկայական կապերի բարձրագույն ձև է և ուսուցման որակապես նոր աստիճան:
- Ինտեգրված դասերն իրենց հերթին հնարավորություն են տալիս ուսուցչին կրճատելու որոշ թեմաների ուսուցման ժամկետները, բացառել տարբեր առարկաներից կրկնվող նյութերը, կոնկրետ նպատակից ելնելով, մեծ ուշադրություն դարձնել այն թեմաներին, որոնք անհրաժեշտ է համարում ուսուցիչը:
- Ինտեգրված դասերը թուլացնում են աշակերտների լարվածությունը, հանում են ձանձրույթը, մեծանում է հետաքրքրությունը, քանի որ նրանք մի գործունեության ձևից անցնում են մեկ այլ գործունեության:
- Ինտեգրումը հնարավորություն է տալիս իրականության տարբեր երևույթների տեղայնացված, մեկուսի դիտարկումից անցնել փոխկապակցված, համակարգված ուսումնասիրության: Վերջին հաշվով, ինտեգրված դասերը խթանում են աշխարհի ամբողջական պատկերացման, բնության և մարդու միասնության ձևավորման գործընթացները:

- Ինտեգրումը հնարավորություն է տալիս աշակերտին ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ, առաջացնում է հետաքրքրություն ուսման նկատմամբ, բարձրացնում է նրա իմացական կարողությունների մակարդակը: Տարրական դասարաններում ինտեգրման գործընթացն ունի իր առանձնահատկությունները և հիմնականում կրում է կոլեկտիվ բնույթ՝ «ամեն ինչից քիչ-քիչ»:
- Ինտեգրման հիմնական և պարտադիր պայմաններից է աշակերտների ինքնագործունեության դերի բարձրացումը: Մանկավարժից պահանջվում է լրացուցիչ պատրաստվածություն, բարձր ինտելեկտ, մանկավարժական վարպետություն: Երեխաները ուսուցման վաղ շրջանում ծանոթանում են շատ հասկացությունների, երևույթների և առարկաների հետ, սակայն դրանց մասին ունենում են տարրական պատկերացումներ: Ուսումնառության ընթացքում այդ պատկերացումների շրջանակն ընդարձակվում է, նրանք ստանում են նորանոր գիտելիքներ՝ լրացնելով իրենց իմացածը: Այստեղ է, որ առաջ է գալիս ինտեգրված դասերի հիմնական դժվարությունը, քանի որ հարկավոր է պահպանել յուրաքանչյուր թեմայի դինամիկ զարգացումը՝ սկսած մատուցումից մինչև ամրապնդում:

Այսպիսով, ինտեգրումը ոչ թե պարզապես մեխանիկական միացում է ամբողջի մեջ, այլ համակարգ, որը հանգեցնում է որակական փոփոխությունների, հետևաբար այն տարբեր աստիճաններ պետք է ունենա: Ըստ մտածողների՝ ինտեգրումը կարող է լինել ներառարկայական և միջառարկայական: Այնուհետև այդ դասակարգմանն ավելացրել են նաև արտառարկայական ինտեգրումը:

Այսպիսով, տարբերում են ուսումնական նյութի ինտեգրման երեք աստիճան՝

- ա) ներառարկայական ինտեգրում,
- բ) միջառարկայական ինտեգրում,
- գ) արտառարկայական ինտեգրում (հիմնական և լրացուցիչ կրթության բովանդակության մեկտեղում):

Այս դեպքում ևս հիմնական խնդիրն է՝ ամբողջացնել ու համակարգել սովորած գիտելիքները և դրանց հիման վրա կատարել ընդհանրացումներ: Ինչ վերաբերում է այն կապերին, որոնք ստեղծվում են արտաուսումնական գործունեության ընթացքում,

ապա, կարելի է ասել, որ դրանք չափազանց տարբեր են իրենց բովանդակությամբ, բազմազան՝ աշակերտի արտաուսումնական գործունեության մեջ:

Որևէ առարկայի պատրաստման տեխնոլոգիական գործընթացի վերլուծությունը ցույց է տալիս, որ, միջառարկայական կապերի նպատակային օգտագործմամբ, ուսուցման գործընթացում տեղի են ունենում որոշակի տեղաշարժեր՝

- .ճանաչողական ու կրթադաստիարակչական առումներով հարստանում է դասի բովանդակությունը,
- .առավել հետաքրքիր ու հաճելի է դառնում դասը,
- .տարբեր եղանակներով ստացած գիտելիքները միավորելու, մեկ ընդհանուր համակարգի վերածելու համար ստեղծվում են անհրաժեշտ պայմաններ,
- .բարձրանում է դասի հագեցվածությունը,
- .բացահայտվում են գիտելիքներ կիրառելու ոլորտները,
- .կատարվում են հիմնավորված եզրակացություններ,
- .բարձրանում է ուսուցչի վարպետության մակարդակը,
- .հարստանում է ուսուցչի գիտամեթոդական զինանոցը,
- .զարգանում է ուսուցման գործոնը,
- .առավել նկատելի են դառնում հետադարձ կապերը,
- .ձևավորվում ու զարգանում է սովորողների ճանաչողական ինքնուրույնությունը և այլն:[4]

1.3Ինտեգրված դասընթացներ մանկապարտեզում

Ժամանակի պահանջները պարտադիր են նախադպրոցական հաստատությունների աշխատակիցներին ՝ուսուցման եւ տեղեկատվության նոր ձեւերի որոնման համար: Դա պայմանավորված է յուրաքանչյուր երեխայի համար անհատական մոտեցման անհրաժեշտությամբ, որը թույլ է տալիս բացահայտել ձեր շահերը, ունակությունները, ստեղծագործական տաղանդները: Այս պահանջի իրականացման միջոցներից մեկը մանկապարտեզում ինտեգրված դասեր ներդնելն է:

[4] https://krtahartak.am/

Ինչ է նշանակում «ինտեգրված զբաղմունք»:

Ինտեգրված զբաղվածության հայեցակարգը ներառում է որոշակի թեմաների էությունը բացահայտելու ընդունակություններ, կիրառելով այն մի քանի գործողություններում, որոնք փոխկապակցված են և լրացնում են միմյանց: Նախադպրոցական համակարգում ինտեգրված աշխատանքի տեխնոլոգիան թույլ է տալիս կատարել նախապես նախադպրոցական կրթության հիմնական խնդիրը ՝թեման լիովին եւ խորը բացել, բայց միեւնույն ժամանակ հնարավորինս կարճ ժամկետներում զբաղվել: Սա թույլ չի տալիս ծանրաբեռնել երեխաներին եւ ավելի շատ ժամանակ թողնել այլ գործողությունների, ինչպիսիք են զբոսանքի եւ բացօթյա խաղերը: Բացի դրանից, սա դրական ազդեցություն է ունենում ուսման շարժառիթների վրա, քանի որ ինտեգրված օկուպացիան, ի լրումն ուղղակիորեն ներկայացնելու նոր նյութը, նախատեսում է երեխաների մեջ ակտիվ ներգրավվածություն խաղալ այն տարրերի միջոցով, որը հայտնի է որպես նախադպրոցական առաջատար գործունեություն:[5]

ԳԼՈՒԽ 2

2.1 ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԸՆԹԱՑՔԸ

3-6 տարեկան երեխաների օրվա կանոնակարգում իրենց կարևոր տեղն ունեն պարապմունքները: Պարապմունքների ընթացքում երեխաները ձեռք են բերում որոշակի գիտելիքներ և հմտություններ, որոնք այնուհետև ավելի խորը յուրացվում և

[5] . https://hy.everaoh.com/

ամրապնդվում են տարբեր խաղերի, մեծերի և հասակակիցների հետ ամենօրյա հաղորդակցման և ինքնուրույն գործունեության ընթացքում: Պարապմունքները իրենց բովանդակությամբ և կազմակերպման ձևով չպետք է առանձնացվեն և շատ տարբերվեն մյուս աշխատանքներից, որոնք իրականցվում են երեխաների հետ օրվա տարբեր ժամերին: Պարապմունքները պետք է ներառվեն օրվա աշխատանքներում այնպես, որ անցումը պարապմունքից երեխայի գործունեության մյուս ձևերին լինի բնականոն, տրամաբանական, սահուն և հիմնավորված: Անհրաժեշտ է հիշել, որ օրվա ընթացքում երեխաների հետ տարվող բոլոր աշխատանքները՝ անկախ դրանց բնույթից, հավասարաչափ կարևոր են և իրենց դերն ունեն երեխայի համակողմանի զարգացման գործում:

Դաստիարակներն իրենց պլանները կազմելիս կարող են օգտագործել տարբեր եղանակներ: Ոմանք նախընտրում են օգտագործել օրացույցներ, որտեղ նշվում են շաբաթվա կամ ամսվա կարևոր աշխատանքներն ու իրադարձությունները: Մյուսներն օգտագործում են աղյուսակներ, որոնց վերին հորիզոնական տողում գրում են աշխատանքային կենտրոնի անվանումը, առաջին ուղղաձիգ տողում՝ ամսաթիվը, իսկ համապատասխան վանդակներում՝ գործունեության տեսակներն ու իրադարձությունները: Որոշ դաստիարակներ անհատական պլան են կազմում՝ հատուկ նպատակներ և նախասիրություններ ունեցող երեխաների զարգացումն ապահովելու համար: Պլանում կարող են լինել նաև միայն նշումներ շաբաթվա ընթացքում իրականացվելիք աշխատանքների, պահանջվող նյութերի և դաստիարակի պարտականությունների վերաբերյալ: Գրավոր պլաններն օգնում են համակարգել աշխատանքը, նրանցում նշվում են աշխատանքային կենտրոններում կատարվելիք լրացուցիչ փոփոխությունները և գրանցվում իրականացրած բոլոր աշխատանքները: Գրավոր պլաններն օգտակար տեղեկություններ են տալիս նաև մանկավարժական կազմին օգնող այցելուներին: Ես շատ եմ կարևորում գրավոր հակիրճ պլանավորվումը մանկավարժի ուսումնական աշխատանքները կազմակերպելու գործում: Պլանավորումից առաջ կարևոր է նախնական դիտարկումն ու երեխաների համար անհատական կրթական պլանների ձևավորումը՝ ելնելով յուրաքանչյուրի կրթական կարիքներից, հետաքրքրություններից ու

հնարավորություններից: Դաստիարակը նախօրոք իմանում է, թե տվյալ գործունեության համար իրեն ինչ է անհրաժեշտ: Գրավոր պլանը օգնում է համակարգել աշխատանքըըստ ուսումնական կենտրոնների:

2.2 Ինտեգրված պարապմունքի պլան

ԹԵՄԱ՝ «Իմ մայրիկն ամենալավն է»

ԽՈՒՄԲ՝ միջին

ԻՆՏԵԳՐՈՒՄ կրթական հետևյալ ոլորտներում՝ խոսքի զարգացում, ճանաչողական զարգացում, սոցիալ- հաղորդակցական կարողություններ, գեղագիտական զարգացում,

ՆՊԱՏԱԿԸ

.Զարգացնող

- Զարգացնել երեխաների ստեղծագործական ունակությունները, գեղարվեստական ճաշակը, հումորի զգացումը, ազատ, անկաշկանդ հաղորդակցվելու հմտությունը:

.Դաստիարակչական

- Դաստիարակել սիրալիր և հարգալից վերաբերմունք մայրիկների, քույրիկների, տատիկների հանդեպ:
- Տղաների մեջ արմատավորել աղջիկների նկատմամբ դրսևորվող ասպետականության սաղմեր:
- ***.Ուսուցողական***

Երեխաների մեջ հետաքրքություն առաջացնել տոների նկատմամբ:

Կարողունակություններ՝

1. լեզվական և հաղորդակցական կարողունակություն,

2. ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն

3. մշակութային կարողունակություն

Վերջնարդյունքներ՝

1.Պատմել նկարի բովանդակությունը

2.Համագործակցել խմբային աշխատանքում

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ՝ խմբային, անհատական,

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ՝ ամրապնդում

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՓՈՒԼԵՐԸ՝

ա)կազմակերպչական,

բ)դրդապատճառներ՝ երեխաներին ներկայացնել իրենց աշխատանքի նպատակը և խնդիրները,

գ)հիմնական՝ անմիջական աշխատանք երեխաների հետ, դ)ամրապնդում՝ եզրակացություն

ԿԻՐԱՌՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐ՝ խաղային, դիտում, խոսքային, խրախուսում

ՑՈՒՑԱԴՐՎՈՂ ՆՅՈՒԹԵՐ՝ Գարնանային տեսարաններ պատկերող նկարներ

ԲԱԽՇԻՉ ՆՅՈՒԹԵՐ՝ Նկարչական թղթեր,ջրաներկ,գուաշ,մրգեր,բանջարեղեն:

ԸՆԹԱՑՔ՝

Պարապմունքը սկսում է գեղեցիկ ոտանավորով,

Մայրիկս կարծես ծաղիկ է սիրուն,

Վար՛դ է ,կակա՛չ է, չէ՛ ,մանուշակ է:

Մայրիկս լու՝յս է ՝ արևից էլ տաք,

Ինձ համար հու՛յս է, ինձ համար փարո՛ս.

Շատ եմ սիրում քեզ, իմ մայրի՛կ քնքուշ:

Դաստիարակ – Երեխաներ, արդեն գարուն է: Բոլորն էլ անչափ շատ են սիրում տարվա այս եղանակը, որովհետև շուրջն ամեն ինչ փոխվում է, զարթոնք է ապրում բնությունը, ծաղկում են ծաղիկները, ծառերը, տաք երկրներից վերադառնում են թռչունները, առվակն ուրախ քչքչում է, ամենուր խինդ է ու ծիծաղ: Գարունն առանձնահատուկ է նաև նրանով, որ տարվա այս եղանակին ենք տոնում մեզ համար ամենաթանկ և գեղեցիկ տոներից մեկը՝ Մայրիկների տոնը: Այսօր մենք կզրուցենք գարնանային այս գեղեցիկ տոնի մասին և պարապմունքը կնվիրենք մեր շատ սիրելի մայրիկներին:

-Երեխաներ, իսկ դուք մի՞շտ եք լավ վերաբերվում ձեր մայրիկներին, մի՞շտ եք լսում, օգնում նրանց:

Տղաներն այսօր առավել ջերմեռանդ պետք է լինեն, քանի որ մայրիկների հետ միասի մենք նշում ենք նաև մեր շատ սիրելի տատիկների, քույրիկների և մեր խմբի աղջիկների տոնը: -Ինչպե՞ս եք դուք շնորհավորում:

Երեխաներին պատմում է, որ մայրերը հազար ու մի գործ են կատարում և խնդրում է երեխաներին պատմել, թե ինչ են կարողանում անել իրենց մայրիկները:

Մատիկների վարժանք՝

Մայրի՜կ,մայրի՜կ,/երկու ձեռքերի ափերը սեղմել իրար և ճկույթներով հարվածել/

Ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ, /իրար հարվածել երկու ցուցամատները

Հյուր է գալիս/իրար հարվածել ճկույթները/

-Այո՞, ի՜նչ լավ է/իրար հարվածել ցուցամատերը/

-Բարև ձեզ /ցուցամատները և ճկույթները հպել իրար, իսկ մնացած մատիկներով ազատ շարժումներ անել/

Դաստիարակ

-Իսկ դուք երբևէ զայրացրել կամ նեղացրե՞լ եք ձեր մայրիկներին:

-Ինչպե՞ս եք օգնել, երբ նա հիվանդ է եղել:

-Ուզու՞մ եք, որ մայրիկները միշտ առողջ և ուրախ լինեն:

-Իսկ ի՞նչ է պետք անել դրա համար:

Դիդակտիկ վարժություն՝ <<իմ մայրիկն ամենալավն է, որովհետև.....>>

Երեխաները պետք է անավարտ նախադասությանն ավելացնեն իրենց մայրիկին բնութագրող մեկ միտք /նա շատ բարի է, կամ քնքուշ է, ժպտերս է, աշխատասեր է, նա շատ գեղեցիկ է.../:

Դաստիարակ

-Երեխանե՜ր, մենք այսօր շատ հետաքրքիր աշխատանք ենք կատարելու, և այդ կերպ կուրախացնենք և կշնորհավորենք մենք մայրիկներին:

Երեխաներն առանձին նկարչական թղթի վրա նկարում են գարնանային ծաղիկներ, որոնք վերջում ամրացնում ենք մեծ պաստառի վրա՝ <<Շնորհավոր ձեր տոնը, սիրելի՜ մայրիկներ>>:

Տղաներից մի քանիսը տարբեր մրգերից կամ բանջարեղենից պատրաստում են համեղ աղցան, հյուրասիրում խմբի աղջիկներին և շնորհավորում նրանց.

-Սիրելի՜ աղջիկներ,շնորհավորում ենք ձեր տոնը: Ցանկանում ենք, որ դուք լինեք միշտ առողջ, գեղեցիկ և գարնան արևի պես պայծառ ու ժպտերես:

Դիտորդների հարց ու պատասխանի վերլուծություն՝

Տնօրեն՝ Պարապմունքը անցավ ջերմ մթնոլորտում, երեխաները շատ ակտիվ էին, մասնակցում էին բոլորը՝ յուրաքանչյուրը՝ իր կարողությունների և ընդունակությունների չափով: Դաստիարակը իրականացրեց չափորոշչահեն ինտեգրված պարապմունք, որի արդյունքում իրագործելով խնդիրները հասավ իր նպատակին:

Պարապմունքին երեխաները ակտիվ էին և հետաքրքրված պարապմունքի գործընթացով:Պարապմունքը միտված էր խոսքի զարգացմանը, ճանաչողական զարգացմանը, սոցիալ- հաղորդակցական կարողություններն:Ավագ խմբի դաստիարակչուհի՝ պարապմունքը շատ հետաքրքիր էր, արդիական և համապատասխանում էր նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին: Երեխաները ակտիվ էին, տիրում էր ուրախ և ջերմ մթնոլորտ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, հետազոտական աշխատանքի ավարտին եկա այն եզրահանգման, որ մանկապարտեզում ժամանակակից պահանջներին համապատասխան պարապմունքի կազմակերպումը նպաստում է պրակտիկ գործունեության կատարելագործմանը, որոնց օգնում են բովանդակալից մոտեցումը, նոր մեթոդների կիրառումը: Ինտեգրված պարապմունքի ընթացքում տարբեր մեթոդիկաների միջև կապերի բացահայտումը նպաստեց առարկաների և երևույթների ուսումնասիրությանը:

Ինտեգրված պարապմունքները պարտադիր թեմատիկ են, որտեղ ընտրված թեման կամ հիմնական հասկացությունը հիմք է հանդիսանում գործունեության տարբեր ձևերի հանձնարարությունների մեկտեղմանը, հետևաբար այդ

պարապմուքներում նախատեսվում է տարբեր ուղղություններից գիտելիքների համախմբում: Ինտեգրված պարապմուքնի կառուցվածքը պահանջում է նյութի հստակություն, տրամաբանական կապ տարբեր մեթոդիկաների միջև: Դա իրագործվում է պարապմունքի ընթացքում երեխաների հետ տարվող աշխատանքի կազմակերպման ժամանակակից մոտեցումներով, ինտերակտիվ գործունեությամբ: Պարապմունքի արդյունքում պարզվեց, որ նախադպրոցական տարիքի երեխան ազատ է, անկաշկանդ, միջավայրում կիրառում է իր գիտելիքները, հմտություններ ձեռք բերում, զարգանում է երևակայությունը, կարողանում է ազատ արտահայտել իր միտքը, կարողանում է կողմնորոշվել և կատարել համապատասխան գործողություններ՝ բանավոր խոսքի միջոցով հիմնավորելով, ներկայացնելով իր երևակայությամբ ստեղծած միտքը: Ուղղակի դաստիարակը պետք է ապահովի զարգացնող միջավայր՝ արդյունավետ աշխատելու համար:

Միջառարկայական կապերով պլանավորված, տարբեր աշխատանքներում ներգրավված երեխաները ավելի շատ բան են սովորում:Հասկացա, որ պարապմունքը պլանավորելիս շեշտը պետք է դնել.

խթանող և խրախուսող պարապմունքների վրա, նյութերի բազմազանության վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՑԱՆԿ

1. «Ինտեգրումը կրթական գործընթացում» - Փնջոյան Տ.-2018թ.էջ402-404

2.Հ.Միտոյան, Լ.Սմբատյան ՈՒսումնամեթոդական ձեռնարկ մանկապարտեզի համար, Երևան 2011, էջ 126-128

3. https://krtahartak.am/

4. https://hy.everaoh.com/